

**KIMBI.AM վարկատեսակի շրջանակում վարկի հերթական վճարման օրվա հետաձգման վերաբերյալ**

Սույն առաջարկով (այսուհետ՝ Առաջարկ) տեղեկացնում ենք, որ 01.07.2019թ.-ից սկսած «Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) իր վարկառուների համար KIMBI.AM վարկատեսակի շրջանակում ներդրել է լրացուցիչ ծառայություն, որով վարկառուները իրենց վարկային պայմանագրի գործողության ընթացքում կարող են հետաձգել վարկի վճարման օրը՝ Առաջարկում նշված պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանված դեպքերում և կարգով:

**I. Առաջարկով նախատեսված ծառայությունից օգտվելու պայմանները.**

- + Վճարման օրվա հետաձգում.** սույն Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով Ընկերության կողմից առաջարկվող լրացուցիչ ծառայություն՝ ուղղված վարկի վճարման օրվա հետաձգմանը: Վարկի Վճարման օրվա հետաձգումն իրականացվում է վարկառուի գործող վարկային պայմանագրի շրջանակում: Այս ծառայությունից օգտվելու դեպքում վարկառուին տրամադրվում է վարկի մարման նոր ժամանակացույց:
- + Վճարման օրվա հետաձգման վճար.** վարկի մնացորդի 6%-ի չափով միանվագ վճար, որը ոչ ամբողջական թիվ լինելու դեպքում կլորացվում է նվազեցման եղանակով հարյուրավորների ճշտությամբ:
- + Վճարման օրվա հետաձգման ժամկետ.** սույն Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով Ընկերության կողմից տրամադրվող 30-օրյա ժամկետ, որով հետաձգվում է վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկի վճարման օրը: Վճարման օրվա հետաձգման ժամկետը հաշվարկվում է Վճարման օրվա հետաձգման վճարը կատարելու օրվանից ներառյալ:
- + Հաշվարկները Վճարման օրվա հետաձգման դեպքում.**
  - o **Ժամկետանց պարտավորություն առկա չլինելու դեպքում** Վճարման օրվա հետաձգման վճար հնարավոր է կատարել վարկի մարման ժամակացույցով սահմանված վարկի հերթական մարման օրվան նախորդող օրերին և(կամ) ճիշտ մարման օրը.
  - o Վարկի մարման ժամանակացույցով սահմանված **վարկի հերթական մարման օրվանից անընդմեջ մինչև 15 օր (15-րդ օրը ներառյալ) ժամկետանց լինելու դեպքում** Վճարման օրվա հետաձգման վճար կատարելու օրվա դրությամբ ժամկետանց օրերի համար հաշվարկված, սակայն դեռևս չվճարված վարկի տոկոսագումարը, սպասարկման վճարն ու տույժերը գումարվում են վարկառուին տրամադրվող մարման նոր ժամանակացույցով նախատեսված առաջին մարման օրը վճարվելիք վարկի ընդհանուր գումարին:
- + Վարկի Վճարման օրվա հետաձգում չի կարող իրականացվել.**
  - o անընդմեջ 16 և ավելի օր ժամկետանց լինելու դեպքում.
  - o անընդմեջ երկու անգամ.
  - o վարկային պայմանագրի գործողության ընթացքում 18 անգամից ավելի:

**II. Առաջարկի ընդունման պայմանները և տեղեկատվության տրամադրումը.**

- + Վճարման օրվա հետաձգման վճարումն իրականացնելու փաստի ուժով այդ վճարման կատարման պահից Առաջարկը համարվում է վարկառուի կողմից ընդունված (ակցեպտավորված) և արտահայտում է Ընկերության՝ Առաջարկում նշված Պայմաններով ծառայությունից օգտվելու վարկառուի լրիվ և անվերապահ կամքն ու մտադրությունը:**
- + Վճարման օրվա հետաձգման վճարումը հնարավոր է իրականացնել Ընկերության մասնաձյուղերում, որոնց հասցեները ներկայացված են Ընկերության [goodcredit.am](http://goodcredit.am) և [kimbi.am](http://kimbi.am) կայքերում:**
- + Վճարման օրվա հետաձգման վճարումը կատարելու փաստի ուժով Ընկերությունը վարկառուի՝ վարկային պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում վարկի մարման նոր ժամանակացույցը, որը փոխարինում է վարկային պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ժամանակացույցին և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:**
- + Վճարման օրվա հետաձգման դեպքում Վարկային պայմանագրով նախատեսված վարկի գծով առաջիկա մարումների իրականացումն անհրաժեշտ է կատարել ներկայացված վարկի մարման նոր ժամանակացույցով նախատեսված չափով և ժամկետում:**

Առաջարկն ընդունելով՝ վարկառուն ամբողջական և անհետկանչելի ձևով ընդունում է Առաջարկի Պայմանները, այդ թվում՝ այն, որ իր կողմից համապատասխան կարգով Վճարման օրվա հետաձգման վճարը կատարելու պահից Առաջարկը համարվում է Ընկերության և վարկառուի միջև գրավոր ձևով կնքված վավեր համաձայնություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն և հանդիսանում է վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Շնորհակալություն ենք հայտնում Ընկերության ծառայություններից օգտվելու համար:

**Հարգանքով՝ «Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ**